Արձանագրություն N 2
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2024/1Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ մեկնարկ՝ 22.02.2024թ. ժամը 11:00: ավարտ՝ 01.03.2024թ. ժամը 16:20:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Արամ Խաչատրյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ (հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ) բացակա՝ գտնվում է արձակուրդում

Հանձնաժողովի անդամներ՝

Կարապետ Հյուսիսյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ճանապարհների պահպանման և շահագործման բաժնի ճանապարհների պահպանման և շահագործման տարածքային ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)
Հրաչյա Բաղդասարյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ճանապարհների պահպանման և շահագործման բաժնի ճանապարհների պահպանման և շահագործման վերահսկում ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)
Մովսես Ավագյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ճանապարհների պահպանման և շահագործման բաժնի ճանապարհների պահպանման և շահագործման տարածքային ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)
Թադևոս Կիլիչյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ճանապարհների պահպանման և շահագործման բաժնի ճանապարհների պահպանման և շահագործման տարածքային ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)

Հանձնաժողովի քարտուղար՝

Կարեն Բաբախանյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի փորձագետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ)

<u>Օրակարգ</u>
<u>Հայտերի բացման և գնահատման նիստի մասին</u>

1. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և հասցեները

1.1 ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2024/1Ս» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել

N	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը	Կապի միջոցը էլ.փոստ, հեռ.համար
1	«ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ԱՍՖԱԼՏ» ՍՊԸ	Անի(Մարալիկ), Հ. Շահինյան 12	spandaryanasfalt@gmail.com +374 -77 -51-50-53
2	«ԵՎՐՈԲՈՒԴ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ	Արտաշատի խճուղի 15/1, Շենգավիթ, ք.Երևան, Հայաստան	eurobudplus@gmail.com +374 77 91-76-58

2. Տեղեկատվություն՝ հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

2.1 16.02.2024թ. Պատվիրատուին ուղղված հարցումները և դրանց տրված պարզաբանումները կցվում են /առդիր՝ 3 էջ/:

3. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 Մասնակիցների կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ.

N	Մասնակցի անվանումը	Արձանագրված անհամապատասխանությունը
1	«ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ԱՍՖԱԼՏ» ՍՊԸ	Հայտով ներկայացված 1, 2, 3, 4, 5, 6 և 7 Ձևերում պահպանված չեն հրավերով սահմանված տոկոսային կշիռները, որոնք պետք է փոխարինվեն գումարային արտահայտությամբ /ՀՀ դրամ/ թվերով՝ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկին համապատասխան:
2	«ԵՎՐՈԲՈՒԴ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ	Հայտով ներկայացված 1, 2, 3, 4, 5, 6 և 7 Ձևերում պահպանված չեն հրավերով սահմանված տոկոսային կշիռները, որոնք պետք է փոխարինվեն գումարային արտահայտությամբ /ՀՀ դրամ/ թվերով՝ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկին համապատասխան:

Հաշվի առնելով արձանագրված անհամապատասխանությունները գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետի պահանջները որոշեց «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2024/1Ս» ծածկագրով գնման ընթացակարգի բացման և գնահատման նիստը կասեցնել և մասնակիցներին առաջարկել 1 /մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Գնահատող հանձնաժողովի նիստը վերսկսել 28.02.2024թ. ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

4. Տվյալներ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին.

«ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ԱՍՖԱԼՏ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունները շտկվել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում:

«ԵՎՐՈԲՈՒԴ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկումը ներկայացվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում, սակայն շտկման ծանուցմամբ ներկայացված հետևյալ պահանջը՝ <ներկայացված 1, 2, 3, 4, 5, 6 և 7 Ձևերում պահպանված չեն հրավերով սահմանված տոկոսային կշիռները, որոնք պետք է փոխարինվեն գումարային արտահայտությամբ /ՀՀ դրամ/ թվերով՝ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկին համապատասխան:> չի կատարվել: Վերոնշյալ ձևերում տոկոսային կշիռները չեն պահպանվել և գումարային արտահայտությամբ սխալ են ներկայացվել: Շտկմամբ ներկայացված ավտոճանապարհների պահպանման և սպասարկման աշխատանքների սակագների կիրառմամբ վերոնշյալ աշխատանքների ձեռքբերումը հնարավոր չէր լինի և այդ սակագները չեն համապատասխանում մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկին:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշեց՝ «ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ԱՍՖԱԼՏ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար, իսկ «ԵՎՐՈԲՈՒԴ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտը մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
	ՉԱՓԱԲԱԺԻՆ 1 **ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի տարածաշրջանի միջպետական, հանրապետական նշանակության ավտոմոբիկային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման, ինչպես նաև այդ ճանապարհների վրա առկա պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքներ**	
	Նախահաշվային գին 247 470 923 ՀՀ դրամ	
«ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ԱՍՖԱԼՏ» ՍՊԸ	**174 834 020,77**	**209 800 824,92**
«ԵՎՐՈԲՈՒԴ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ	206 208 674	247 450 409

Հիմք ընդունելով գնահատման արդյունքները գնահատող հանձնաժողովը ***որոշեց.***

- Որպես գնման ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարող և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից «ՏԿԵՆ-ՀԲՄԱԾՁԲ-2024/1Ս» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ԱՍՖԱԼՏ» ՍՊԸ-ին:

- Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

- <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

- Պայմանագիր կնքելու նպատակով անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել՝ պայմանագրի ապահովում գնման գնի 10 (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ գնման գնի 30 (երեսուն) տոկոսի չափով, ինչպես նաև հրավերով սահմանված, պայմանագրի կատարման համար պահանջվող մեքենա-սարքավորումների վերաբերյալ տեղեկատվությունը /ներառյալ սեփականության իրավունքը, անհատույց օգտագործումը կամ վարձակալությունը հավաստող փաստաթղթերը/:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

6. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի անդամներ՝

Կ. Հյուսիսյան _____

Հ. Բաղդասարյան _____

Մ. Ավագյան _____

Թ. Կիլիչյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Կ. Բաբախանյան _____

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2024 թվականի փետրվարի 16-ի որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն
Ընթացակարգի ծածկագիրը « ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2024/1Ս »

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար՝ **«Աշտարակի տարածաշրջանի ավտոճանապարհների պահպանման աշխատանքների»** ձեռքբերման նպատակով կազմակերպված « ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2024/1Ս » ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ **16.02.2024թ.** ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ **16.02.2024թ..** տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1՝

Կոնկրետ օրինակով պարզաբանել թե ինչպես պետք է հաշվարկել ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2024/1Ս հրավերի շրջանակում որակավորման չափանիշներում պահանջվող մեքենա-սարքավորումների հաշվարկը, քանի որ հրավերում նշված ձևակերպումը տարընկալումների պատճառ է դառնում:

Հարցադրում N 2՝

Անհրաժեշտ է արդյոք ներկայացնել մեքենա-սարքավորումների 70% սեփականության իրավունքով տնօրինելու վերաբերյալ փաստաթղթերը, եթե այո, ապա մրցույթի որ փուլում:

Հարցադրում N 3՝

3. Արդյո՞ք մեքենա-սարքավորումների ձեռքբերման վերաբերյալ առ ու վաճառքի պայմանագրերը կամ ներմուծող-մատակարար կազմակերպության հետ պայմանագիր որի համաձայն մատակարարը պարտավորվում է ներմուծել և գնորդը գտնել պահանջված մեքենա-սարքավորումը, կհամարվեն հրավերի պահանջներին համապատասխան:

Հարցադրում N 4՝

Հաշվի առնելով, որ հրավերի տեքստում լիցենզիայի առակայության մասին հիշատակում չկա, խնդրում եմ պարազաբանել նաև արդյոք մրցույթին մասնակցելու համար մասնակցի լիցենզիա ունենալը պարտադիր է:

Հարցադրում N 5, 6, 7, 8՝

1. Կից ներկայացված փաստաթղթում մենք հաշվարկել ենք անհրաժեշտ մեքենա-սարքավորումների քանակը: Խնդրում ենք հասատել՝ արդյոք կատարված հաշվարկը համապատասխանում է հրավերի պահանջներին:

2. Պարզաբանել՝ արդյոք ներկայցված մեքենա-սարքավորումները ունեն տարիքային սահմանափակում, թե՞ ոչ:

3. Քանի որ մրցույթը 5 տարի ժամկետով է, ուստի ցանկանում ենք պարզաբանել՝ արդյոք 10 տարի և ավել պայմանագրային ժամկետով անհատույց օգտագործմամբ ստացված մեքենա-սարքավումները կդիտարկվեն որպես սեփականություն և հաշվարկի մեջ կներառվեն որպես 70% սեփականության իրավունքով շահագործվող հիմնական միջոցներ:

4. Համաձայն Հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքի պետական գրանցում չպահանջող ցանկացած տեսակի ՀՄների սեփականությունը հավաստվում է ըստ գույքային քարտերի: Կոմպրեսորները որպես ՀՄ-ներ կազմակերպության հաշվեկշռում հաշվառված են ըստ գույքային քարտերի, ուստի խնդրում ենք տալ պարզաբանում՝ արդյոք համաձայն հրավերի պահանջների՝ կարող ենք վերջիններս ընդգրկել 70% սեփականության իրավունքով շահագործվող հիմնական միջոցների կազմում:

Պարզաբանում N 1, 2, 3, 4՝

Հարգելի մասնակից. Ի պատասխան Ձեր պարզաբանման հարցմանը հայտնում ենք, որ.

1. Պահանջվող մեքենա սարքավորումների հաշվարկի մասով. Օրինակ՝ ձմեռային ժամանակահատվածում սպասարկման ենթակա ավտոճանապարհի երկարությունը կազմում է 107,89 կմ, որի համար կպահանջվի 3 հատ Կոմբինացված ճանապարհային մեքենա /40+40+21-ից ավել/: Օրինակ 100 կմ ի դեպքում կպահանջվեր 2 հատ Կոմբինացված ճանապարհային մեքենա /40+40+21-ից պակաս/: Այլ մեքենա-սարքավորումների քանակի հաշվարկը պետք է կատարվի նույն տրամաբանությամբ:

2, Մեքենա-սարքավորումների սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթերը պետք է ներկայացվի ընտրված մասնակցի կողմից մինչև պայմանագիրը կնքելը՝ ընտրված մասնակից ճանաչվելուց հետո:

3. Մեքենա-սարքավորումների սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթեր են համարվում համապատասխան տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրերը՝ համապատասխան կազմակերպության անվամբ թողարկված:

4. Լիցենզիայի առկայունը աշխատանքների կատարման պարտադիր պայման է համաձայն ՀՀ քաղաքաշինական նորմերի: Հայտով մասնակիցը լիցենզիա կամ համապատասխան ներդիրներ չի ներկայացնում, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ պայմանագրի կատարման համար լիցենզիայի առկայությունը պարտադիր է, այն ընտրված մասնակցի կողմից պետք է ներկայացվի իր կողմից հաստատված պայմանագիրը Պատվիրատուին ներկայացնելու հետ միաժամանակ: Հակառակ դեպքում ընտրված մասնակցի հետ պայմանագիր չի կնքվի, վերջինիս դիմում հայտարարությունը առ այն, որ նա համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին, կգնահատվի ոչ հավաստի և կկիրառվեն գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված միջոցները:

Պարզաբանում N 5, 6, 7, 8՝

Ի պատասխան Ձեր պարզաբանման հարցմանը, հայտնում ենք, որ.

1. Հարցման 1-ին հարցը պարզաբանման ենթակա չէ,

2. Մենքենա-սարքավորումներին ներկայացվող պահանջները սահմանված են ՀՀ կառավարության 04,11,2010թ, թիվ 1419-Ն որոշմամբ,

3. Ճանապարհերի պահպանման աշխատանքներ իրականացնող կազմակերպության մեքենա-սարքավորումների առնվազն 70 տոկոսը պետք է հանդիսանա վերջինիս սեփականությունը /անհատույց օգտագործման իրավունքով ստասված հիմնական միջոցները սեփականություն չեն համարվում/:

4. Կոմրեսորները եթե հաշվառված են կազմակերպության հաշվեկշռում որպես սեփականություն, կարող են ընդգրկվել հրավերով սահմանված առնվազն 70 տոկոս սեփականության իրավունքով կազմակերպությանը պատկանող մեքենա-սարքավորումների կազմում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել « ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2024/1Ս » ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Կ. Բաբախանյանին:

Հեռախոս՝ 010-51-13-28:

Էլեկտրանային փոստ՝ k.babakhanyan@mta.gov.am:

« ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2024/1Ս » ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով